ՔՅԱՍԻԲՆ ՈՒ ՀԱՐՈՒՍՏԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Հարուստի ու քյասիբի հողերը իրար կշտի ա ըլում։ Մի տարի էրկուսն էլ իրար հետ վարըմ, ցանըմ են. մի քանի ժամանակից եդը քյասիբը գնըմ ա տենըմ իրան արտը լավ դուս ա եկել, համա հարուստի արտըմը զատ չի կա։
Էս քյասիբը վեր ա կենըմ գալի հարուստի կուշտը, ասըմ ա.— Այ մարդ, իմ արտը շատ լավ դուրս ա եկել, համա քու արտըմը զատ չիկա, մի գնա տես էդ ի՞նչ բան ա։
Հարուստը ձին նստըմ ա գնըմ մտիկ անըմ, տենըմ ա դուզ վեր իրան արտըմը զատ չիկա, համա էդ քյասիբի արտը սանդրած, շարած կաղնած ա։
Սա մխելի ման ա գալի, պտտվըմ ու գալիս ա քյասիբի կուշտը, ասըմ ա.— Արա՛ քյասիբ։
Ասըմ ա.— Ի՞նչ ա։
Ասըմ ա.— Դուզ են ասել, վեր քյասիբի կլխին խելք չի ըլըմ. բա նա քու արտն ա՞, վեր դու ասըմ ես՝ իմ արտը լավ ա դուս եկել, քունը՝ չէ, ասըմ ա,— հա՛, ա շան տղա, քունը էն ա, վեր միջին զատ չիկա, էն վեր խելքը կլխին մարդը կհվատի, վեր հարուստի արտըմ զատ չի ըլի, աղքատի արտըմ լիքը ըլի։ Վեր տհե ըլի, էլ խի՞ ա նա աղքատ, էն ա նա էլ հարուստ կըլի էլի։
Նա ասըմ ա.— Չէ՛, էն ա քունը։
Նա ասըմ ա.— Չէ՛, քունը էն ա։
Սրանք շատ են ղլմաղալ անըմ, իրար հետ գալիս են կաթողիկոսի կուշտը, հարուստը մտնըմ ա թաքուն կաշառում, ու նոր իրար հետ մտնըմ են բողոքըմ. կաթողիկոսը ուզըմ ա, վեր աղքատի արտը հարուստին տա։
Ասըմ ա.— Գնացեք ձեր տները, էգուց սհաթի վեցին ով ըստի ըլավ, նշանակըմ ա էն լավ արտը իրանն ա։
Հմի էս քյասիբը մտածըմ ա, ասըմ ա.— Նա ձիով շուտ կգա, բա ես ի՞նչ անեմ։
Սա մտիկ ա անըմ, տենմ ա հարուստն ու կաթողիկոսը քչփչում են, էդ հաղաղին դա թաքուն մտնըմ ա կաթողիկոսի թախտի տակը։
Քշերվա մի վախտը մի կնիկ մի բոխչա կապած գալիս ա սրա կուշտը, ասըմ ա.— Կաթողիկոս ջան, Կիկոսիս փսակըմ եմ, տերտերը թուխտ չի տալի, վեր հրսանիք անեմ, խնդրըմ եմ մի թուխտ տաս, վեր տղիս փսակեմ։
Ասըմ ա.— Օրշնյալ տերտերը ճիշտ ա արել, երևի չի հասնըմ։
Ասըմ ա.— Հասնըմ ա։
Էդ կնիկը շատ սիրուն ա ըլմ, կաթողիկոսի աշկը ընգնըմ ա էդ կնգանը։
Ասըմ ա.— Օրշնյա՛լ, դե բի իմ Կիկոսն ու քու Կիկոսն էլ իրար հետ փսակենք։
Էս կնիկը առաջ չեմ ու չում ա անըմ, համա դե տեղը նեղ ա, ինչ անի, համաձայնվըմ ա։
Էն քյասիբն էլ ամեն բան տենըմ ա։
Ըռավեդը շուտ աղքատը դուրս ա գալի, ասըմ ա.— Ես էկա։
Հարուստը գալիս ա, ասըմ ա.— Ես էլ էկա։
Նա ասըմ ա.— Ես եմ շուտ էկե։
Նա էլ ասըմ ա.— Ես եմ շուտ էկե։
Կաթողիկոսը ասըմ ա.— Դու ե՞փ ես եկել։
Աղքատն ասըմ ա.— Օրշնյալ, ես էն վախտին եմ եկել, որ քու Կիկոսին ու էն կնգա Կիկոսին իրար հետ փսակեցիր։
Կաթողիկոսը վախից ասըմ ա.— Սո՛ւս, անիծվես դու, անիծվես, գնա՛, գնա՛, էն լավ արտը քունն ա։